

## Կ Ա Ր Ծ Ի Ք

**Արմինե Հովհաննեսի Իսկաջանի՝ « Դեռահասների սոցիալական ցանցերից  
կախվածությունը որպես դեստրուկտիվ վարքի տեսակ » թեմայով  
ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական  
աշխատանքի վերաբերյալ**

Մերօրյա գիտատեխնիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումներին համընթաց լայնամաշտաբ տարածում են ստացել նաև սոցիալական ցանցերը և դրանցից կախվածությունը: Սոցիալական մեդիան էլեկտրոնային հաղորդակցության ձև է, ինչը հանրությանը հնարավորություն է ընձեռնված տարբեր հեռավորությունների միջև ազատ և արագ կապ հաստատել, տեղեկատվություն ստանալ և փոխանակել: Ինտերակտիվ մեդիան աննախադեպ հնարավորություններ է ընձեռում հաշիվ ունեցող օգտատերերին հանդես գալ որպես բովանդակության ստեղծող և սպառող. առցանց ուսումնական գործընթաց , հեռավար աշխատանք, նախագծերի կառավարում, գիտական տվյալների փոխանակում և այլն: Համացանցը, որպես գլոբալ փոխկապակցված տեխնոլոգիական համակարգ, ունի ինչպես առավելություններ այնպես էլ թերություններ: Շատ հաճախ իրականությունից խուսափելու ցանկությունը գերիշխող է դառնում և մարդը փորձում է որոնել այլ համապատասխան միջոցներ: Արդյունքում հայտնվում արհեստական իրականության՝ սյուրռեալ աշխարհում: Անհատը փնտրում է խնդիրների լուծման պատրանքային միջոցներ: Նրա կողմից ընտրված սոցիալական ցանցերը սկսում են գերակայել խնդիրների լուծման ընթացքում և հեշտությամբ ամրագրվում վարքագծում՝ դառնալով իրականության հետ փոխգործակցության կայուն միջոց:

Մեր օրերում տեղեկատվական տեխնոլոգիական միջոցները ունեն նաև կաևոր ռազմավարական նշանակություն: Դրանք կիրառվում են նաև հիբրիդային

պատերազմներում, զանգվածների քարոզչության ու կառավարման գործընթացներում միավորում կոնկրետ նպատակների շուրջ, թիրախավորում սոցիալական խոցելի խմբերին, մասնավորապես դեռահասներին: Նրանք մեկուսանում են, օտարվում, կտրվում իրականությունից և կենտրոնանում կոնկրետ գործողությունների և առարկաների վրա:

Ժամանակակից հոգեբանական գիտական գրականության ուսումնասիրություններում հեղինակները բազմիցս անդրադարձ են կատարել ատենախոսի կողմից քննարկվող հասկացություններին, դիտարկել դրանք տարբեր տեսանկյուններից: Դեռահասների սոցիալական ցանցերից կախվածությունը սոցիալական հոգեբանության մեջ կարող է դիտարկվել որպես դեստրուկտիվ վարքի ձև, ինչը խաթարում է սոցիալական փոխհարաբերությունները, ձևավորում ապակողմնորոշիչ արժեքային համակարգ՝ ազդեցություն թողնելով անձի սոցիալական ինքնության, «ես» կոնցեպցիայի վրա: Դեռահասները ցանկանում են ընդունված լինել իրենց ռեֆերենտային և հասակակիցների խմբերում: Սոցիալական ցանցերը ունեն մեկնաբանության գնահատման մեխանիզմներ, որոնք դառնում են սոցիալական ընդլայնվածության չափանիշներ: Այնուամենայնիվ սոցիալական ցանցերի կախվածության հիմանախնդիրը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ դեռ ուսումնասիրման, նորոգյա հետազոտության և լրամշակման կարիք ունի որտեղ և մի շարք մոտեցումներ այլ լուծումներն են պահանջում:

Անդրադարձ կատարելով ատենախոսի ներկայացրած թեմային և պահանջներին՝ կարող ենք նշել, որ Արմինե Հովհաննեսի Իսկաջյանի կողմից պաշտպանության ներկայացրած ատենախոսության ծավալը կազմում է 131 համակարգչային էջ, բաղկացած է ներածությունից, առաջադրված տեսական և հետազոտական խնդիրների լուծման երեք գլուխներից, եզրակացություններից, հավելվածներից :



Հեղինակը ներածական հատվածում անդրադառնում է ընտրված թեմայի արդիականությանը, պայմանավորելով և հիմնավորելով նրանով, որ ժամանակակից աշխարհում կիբերտեխնոլոգիաների դերն անփոխարինելի է տարբեր ոլորտներում՝ կրթական, առողջապահական, բիզնես, զվարճանք, նույնիսկ՝ ռազմաքաղաքական: Առաջնային նշանակություն է տալիս մեդիագրագիտությանը ոչ միայն անհատի ապահովության տեսանկյունից, այլև՝ ազգային անվտանգության, քանի որ համացանցի ոչ ճիշտ կիրառումը, տեղեկատվության արտահոսքը կամ կեղծ տեղեկատվության տարածումը դիտարկում է ճակատագրական և անձի, և պետության համար: Գտնում է նաև, որ սոցցանցերից կախվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ դեռահասների ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Ավելին չափից շատ կիրառությունը կարող է հանգեցնել կախվածության, որն էլ իր հերթին ծնում է դեստրուկտիվ վարք՝ սուիցիդի դրսևորումներ, վարքային շեղումներ, դելիկվենտ, ագրեսիվ վարք: Ա.Իսկաջյանը ձևակերպել է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, առաջադրել վարկած, համաձայն որի՝ ենթադրում է, որ գոյություն ունի որոշակի փոխկապվածություն սոցիալական ցանցերից կախվածության և դեստրուկտիվ վարքի այլ ձևերի միջև (սուիցիդալ վարք, դելիկվենտ վարք, ագրեսիվ վարք, առցանց խաղերից կախվածություն): Շարադրված են հետազոտության մշակվածության աստիճանը և մեթոդաբանական հիմքերը, տեսագործնական նշանակությունը, հիմնավորված են ընտրակազմը՝ տարիքային, սեռային, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները և կրառված մեթոդներն ու մեթոդիկաները: Հստակ ձևակերպված են պաշտպանությանն ներկայացվող դրույթները և գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլխում «Համացանցային կախվածության հիմնախնդիրը հոգեբանական գիտության համատեքստում» և երեք ենթագլուխներում Իսկաջյանը ներկայացնում է դեռահասների համացանցից կախվածության ախտանիշները, դերսևորման հոգեբանական առանձնահատկությունները, տալիս կապվածության մեխանիզմները և բնութագրերը,

վերլուծում՝ կատարելով հոգեբանական համադրումներ ժամանակակից և արևմտյան գիտական դպրոցների գաղափարներով: Հեղինակը վեր է հանում ադեկտիվ վարքի ձևավորման դետերմինանտները, դրանց առանձնահատկությունները, ֆունկցիոնալ ուղղությունների տեսանելի դրական և բացասական ասպեկտները:

Երկրորդ գլխում ատենախոսը ներկայացնում է դեռահասների հոգեբանական բնութագիրը, կանգ է առնում ճգնաժամերի տեսություններին, սոցիալական ցանցերի բացասական մարտահրավերներին՝ կատարելով դեռահասների դեստրուկտիվ վարքի վերլուծություն ՀՀ-ում գրանցված ինքնասպանության և դրանց փորձերի, սեռային, տարիքային և ժամանակագրական ցուցանիշներին: Համեմատական վերլուծության ենթարկում սոցիալական ցանցերից կախվածություն ունեցող և չունեցող դեռահասների դեստրուկտիվ վարքաձևերի միջև: Ատենախոսության գլուխներում և ենթագլուխներում առկա են ամփոփումներ և համապատասխան եզրակացություններ: Ատենախոսության երրորդ՝ «Սոցիալական ցանցերից կախվածության ուսումնասիրության փորձարարական հետազոտություն» գլխում Ա. Իսկաջյանը անդրադառնում է սոցիալական ցանցերից կախվածության հիմնահարցի բուն էմպիրիկ հետազոտությանը, ընտրանքին, փորձարարական փուլերին, արդյունքների վերլուծությանը: Հեղինակը հիմնավորել է հետազոտության ռազմավարությունը, մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը, Արձանագրված արդյունքները ենթարկել է Կ.Պիրսոնի և t-թեստ մաթեմատիկական վիճակագրության տվյալների վերլուծության, պարզել, որ սոցցանցերից կախվածության և շեղվող վարքի միջև առկա է սերտ համահարաբերակցություն, ինչը առավել համոզիչ և հավաստի է դարձնում հետազոտության ստացված արդյունքները: Ստացված տվյալները արծարծել է աղյուսակների, գծապատկերների ձևով: Նույն գլխի 3.3 ենթագլխում հեղինակը ներկայացրել է հոգեբանական խորհուրդներ և մեթոդական ցուցումներ, մշակել ծնողների համար ուղեցույց դեռահասների սոցիալական ցանցերից կախվածության նախնական կանխարգելման վերաբերյալ:



Ատենախոսի կողմից ներկայացրած հետազոտությունը կատարված է գիտական ճշգրտությամբ, իսկ ստացված արդյունքները հիմնավորված են: Առաջ քաշված եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Սեղմագիրը հակիրճ պարունակում է ատենախոսության բովանդակությունը, պաշտպանությանը ներկայացված դրույթները և աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումները:

Ատենախոսի կողմից կատարվել է լուրջ, երկարատև և բազմակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ առկա են որոշակի վիճահարույց հարցեր.

1. Դեռահասության տարիքային պարբերացումը գիտական գրականության մեջ արևմտյան և ռուսական դպրոցներում մի փոքր տատանվում է: Ատենախոսի կողմից մտահանգումները դեռահասության շրջափուլի /11-17 տարեկան հասակ/ հետ կապված ընդգրկում է՝ պայմանավորված վաղ և ուշ դեռահասների զարգացման սեռային և անատոմիաֆիզիոլոգիական տարբերություններով, վարքային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական դրսևորումներով: Ինչո՞վ է պայմանավորված նման տարիքային տատանումը:
2. Աշխատանքի գրականության ցանկում հղումները արտահայտված են, սակայն մի շարք էջերում ատենախոսը կրկնակի տեղադրել է էլեկտրոնային հղումներ, մասնավորապես 65, 31 և այլ էջերում:
3. Ատենախոսուսը կիրառել է մեծածավալ անգլալեզու գրականություն, սակայն միաժամանակ աշխատանքում օգտագործել է այլալեզու բացատրություններ, մասնավորապես 29,35,46,67 և այլն, ինչը ցանկալի չէ:
4. Հեղինակը հետազոտական հատվածում արդյունքները ներկայացրել է աղյուսակներով և գծապատկերներով, առկա են թվային վերլուծություններ, սակայն ցանկալի կլիներ, որ ատենախոսը կատարեր առավել հասկանալի և խորը հոգեբանական վերլուծություններ, մեկնաբանություններ, համադրումներ:




5. Ատենախոսության մեջ առկա են տեխնիկական վրիպակներ և թերություններ, մասնավորապես՝ քերականական սխալներ, բացթողումներ:

Կարծում ենք նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է բավականին ծավալով տեսական վերլուծություն և փորձարարական հետազոտություն:

Ատենախոսությունը գիտական պատշաճ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, ներկայացնում է հոգեբանության բնագավառի կարևոր նորույթ պարունակող խնդիր, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության գիտության կոմիտեյի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի՝ գիտության տվյալ բնագավառում կարևոր խնդրի լուծում պահանջին, իսկ հեղինակը՝ Արմինե Հովհաննեսի Իսկաջյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:


Պաշտոնական ընդդիմախոս,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

 **Լ.Ռ. Արամյան**

Լ. Ռ. Արամյանի ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝

 **Մ.Մ. Իսախիրյան**

Ք. Երևան , 27.11.25 թ.

